



## Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն Ամյո ՍՊԸ  
ԳՂ, ք. Երևան 0012  
Վաղարշյան 8/1

Գ. +374 10 260 964  
Ֆ. +374 10 260 961

Grant Thornton Amyot LLC  
8/1 Vagharshtyan Str.  
0012 Yerevan, Armenia  
T +374 10 260 964  
F +374 10 260 961  
www.gta.am

«Ակրա- Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ-ի բաժնետերերին և Խորհրդին.

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ-ի նրա դուստր ընկերությունների (այսուհետև միասին՝ «Խումբ») կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

### *Համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը*

Խմբի տնօրինությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի մշակումը, կիրառումը և պահպանումը, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

### *Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի հիման վրա եզրակացություն արտահայտել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք

այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները գերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռքբերելու նպատակով ընթացակարգերի իրականացումը: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է ԽճԻ համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհարժեշտ ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ ԽճԻ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարված հաշվապահական գնահատումների, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացությունն արտահայտելու համար:

*Եզրակացություն*

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԽճԻ ֆինանսական վիճակի և նույն ամսաբաժին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

09 մարտի, 2009թ.

Երևան

Գրանք Թորնթոն Ամիո Այոյո՝



*Grant Thornton Amiot LLC*